

ՊԸՐՐԻ ՏԵՍԱԿՅԵՑԱԲ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊԻՆ ՅԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի էր էլ անարտեղ իտալիա կատարած իր պաշտոնական այցելությունը, Յովհաննես Պողոս Բ. պապին հետ տեսակցությունը:

Պըրրի Հռոմի մեջ դոմինիկանական կոնգրեգացիոնալ պապին հետ:

Յովհաննես Պողոս Բ. պապը վերահաստատեց Լիբանանի իր պատկերասրահը:

Հանդիպում է կապ Պըրրի յայտնեց, որ պապը խաղաղության է քաղաքակրթություններում միասնության խորհրդանիշն է:

Պըրրի անցյալը, որ Լիբանան տակալին կը մնայ պապի սրտին մեջ է կը նկատուի Միջին Արևելքի տագնապներու լուծման բանալին:

Յետմիջօրէին Պըրրի այցելեց Իտալիոյ խորհրդարան, ուր հանդիպում մը ունեցաւ իտալացի իր պաշտօնակիցին՝ Ֆերտինանտօ Բասսինիի հետ: Բնակարկուցան Միջին Արևելքի ներկայ իրադարձութիւնը, ինչպէս նաև Լիբանանի տագնապի յարաբերութիւնները:

Բասսինի նշեց, որ Միջին Արևելքի կացութիւնը կը ցանկալի տեսնել պապի իրադարձութիւնը, որ Լիբանան մեծ դեր ունի կատարելիք շրջանին մէջ խաղաղութիւն հաստատելու իմաստով:

Բասսինի ընդգծեց, որ իտալական խորհրդարանը կը ցանկալի տեսնել պապի իրադարձութիւնը, որուն կողքին պաղեստինեան իշխանութիւն մը, որուն դէմ բռնարարներ չեն գործուիր եւ որուն ժողովուրդը տանջանքի մէջ չ'ապրիր: Ան անդրադարձաւ պաղեստինեան իրադարձութիւն տագնապի լուծման գծով խաղաղութեան ճամբու քարտէսին, դիտել տալով, որ անկիւ շտապ լուծում մըն է:

Պըրրի իր կարգին ընդգծեց, որ Լիբանան շրջանին մէջ ամէնէն կայուն երկիրներէն է եւ պէտք է բացառուի անոր դիմագրաւած տնտեսական տագնապը:

Պըրրի շեշտեց, որ շրջանը չի կարօտիր միայն ապահովութեան, այլ՝ արդար եւ ամբողջական խաղաղութեան: Ան խնդրեց նաև, որ Իտալիոյ խորհրդարանը վաւերացնէ Լիբանանին փոխ տալու 200 միլիոն տոլարի գումարը, որ խոստացուած էր «Փարիզ-2» վեհաժողովին:

Միւս կողմէ, Պըրրի խստի դատապարտեց ամերիկեան Բոնկրէսին կողմէ այն որոշումը, որ կը միտի Սուրիան քիմիական զէնքեր արտադրելու շրջանին մէջ Իսրայէլի հովանաւորած ամերիկեան պատերազմին:

Պըրրի շեշտեց, որ ամերիկեան Բոնկրէսի կողմէ Սուրիան հաշուետուութեան կանչելու փորձերը սիրական լուրջ ինչի մը մտադրացումն է:

ՕՊԵՅՏ ՄԵԿՆԵՑԱԲ ՆԻԻ ԵՈՐՔ

Արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտ էր էլ առաւօտեան նախքան Նիւ Եորք մեկնումը Պէյրութի միջազգային օդակայանին մէջ տուաւ մամուլի ասուլիս մը, ուր կատարեց յայտարարութիւններ, որոնց մէջ շեշտեց, թէ Իսրայէլ կարիքը ունի ուժի մը, որ պապի վիճակը միջազգային օրէնքներն ու կանոնները խախտելու փորձերէն:

Օպէյտ մերժեց Իսրայէլի այն որոշումը, թէ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատը պէտք է արտաքսուի, նկատել տալով, որ Արաֆատ պաղեստինեան իսրայէլեան խաղաղութեան գործընթացին մէջ մեծ դեր ունի կատարելիք: Ան խստի քննադատեց նաև իսրայէլեան լուրջին կի իրրեւ արդիւնք ամերիկեան Բոնկրէսին կողմէ Սուրիան հաշուետուութեան կանչելու ծրագիրը:

Նշեւք, որ Նիւ Եորքի մէջ Օպէյտ պիտի մասնակցի ՄԱԿի ընդհանուր ժողովին, ապա պիտի այցելէ Վատիկան ու Մոսկուա եւ Պէյրութ պիտի վերադառնալ յառաջիկայ 8 Հոկտեմբերին:

ԵԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ՆՈՒԹԵԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՐԳԱԻՈՐՄԱՆ ՀԱՐՑ

Ելեկտրական ու թեան մարզին դիմագրաւած տագնապին առնչութեամբ, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Ալուպ Հըմայէտ էր էլ յոյս յայտնեց, որ ամբողջ արաբական աշխարհին մէջ ելեկտրական մարզը արձանագրեց բարելաւում մը, դիտել տալով, որ Լիբանանի մէջ ելեկտրականութեան մարզը արձանագրեց բարելաւում մը, որին տալով, որ Լիբանանի մէջ ելեկտրականութեան ցանցի ընդհանուր կարգաւորումը արդէն իսկ ամբողջացած է:

Ինչպէս նաև կը նուազեցնեն մարզին ծախսերը, թեթեւեղելով լիբանանեան պետութեան եւ քաղաքացիին պարտադրուած նիւթական բեռը:

տարարութիւնները կատարեց ուժանիւթի նախարարութեան մէջ ելեկտրականութեան մարզի կարգաւորման գծով արաբական առաջին վեհաժողովին ընթացքին:

BALTAYAN ELECTRONIC

Ս. մասնաճիւղ
Պարոն Համուր,
Սրբաբնակ քաղաք,
հեռ. 01/262901

Ք. մասնաճիւղ
Տարու, հեռ. 01/259600

ՄԵԹՐ ԱԲԵՏԻՍ ՆԱԼ ՊԱՆՏԵՍՆ
(Փաստաբան Միացեալ Նահանգներէն)

Յարգոյ յաճախորդներուն կը տեղեկացնէ, թէ 20 Սեպտեմբերէն 6 Հոկտեմբեր 2003 պիտի գտնուի Լիբանան եւ որեւէ դատական, առեւտրական հարցերու խորհրդակցութեան համար պիտի ընդունի զիրենք ամէն օր հետեւեալ հասցէին.

Օրաստրաժ Ժոնյաէ, YARA Center, «Ալմա-զա»ի դիմաց, Ա. յարկ, հեռ. 01-877740 եւ 03-273266:

**ՀԱՅ ԱԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԱՅՆՃԱՐ - ԼԻԲԱՆԱՆ
ՎԵՐԱՍՈՒՏ**

Տերը կամի 2003 - 2004 տարեշրջանի արձանագրութիւնները տեղի պիտի ունենան հետեւեալ ձեւով.

- Գործընթացի՝ 17 Սեպտեմբերէն Ուրբաթ՝ 19 Սեպտեմբեր 2003 առաւօտեան ժամը 9:00էն 1:00 ցերեկօթիկ աշակերտներ:
- Երկուշաբթի՝ 22 եւ Երեքշաբթի՝ 23 Սեպտեմբեր 2003 առաւօտեան ժամը 9:00էն կէսօրէ ետք ժամը 3:00 գիշերօթիկ աշակերտներ:
- Վերասուիտ Գործընթացի՝ 24 Սեպտեմբեր առաւօտեան ժամը 8:00ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՄ

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Ուալիտ Իտօ էր էլ խորհրդարանին մէջ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն մէջ շեշտեց, որ Պասպտա - Ալէյ էրեսփոխանական մասնակի ընտրութիւնները Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար, էրեսփոխան Ուալիտ Ժոնյալարի ազգային մեծութիւնը չ'փաստեցին, կոչ ուղղելով սպասել 2005ի էրեսփոխանական ընտրութիւններուն՝ սեւ եւ սպիտակ թելերը իրարմէ պանապանելու համար: Իտօ խստի դատապարտեց նաև ամերիկեան Բոնկրէսի կազմակերպած խորհրդածողովին ընթացքին վօր. Միջէլ Անուի յայտարարութիւնները:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Ուալիտ Պասպտաի էր էլ նկատել տուաւ, որ Պասպտա - Ալէյ էրեսփոխանական մասնակի ընտրութիւնները ապացուցեցին երկրին ժողովրդավար առողջ կարգերը: Ան նշեալ յայտարարութիւնը կատարեց ներքին գործոց նախարար Էլիաս Մըրիի հետ հանդիպումին ընթացքին:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Նամթալլա Ապի Նասըր էր էլ կոչ ուղղեց լիբանանեան ընդդիմութեան՝ մշակելու լիբանանեան նոր ծրագիր մը, նպատակ ունենալով փրկել երկիրը եւ ստեղծել անկեղծ քաղաքացիութիւն, հեռու՝ Սուրիոյ հետ թշնամանալու քայլերէ:

● ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ եւ առեւտրի նախարար Մարուան Համատէ էր էլ Գահիրէի մէջ բացումը կատարեց Արաբական Տնտեսական Խորհուրդի 72րդ խորհրդածողովին, կոչ ուղղելով որդեգրել շրջանային ծրագիր մը՝ արաբական տնտեսական համալսման մը հաստատելու: Ան շեշտեց, որ հարկ է տալ արաբական համարձակ որոշումներ՝ դիմագրաւելու համար շրջանային մարտահրաւերները եւ օգտուելու համար ստեղծուած առիթներէն:

● ԿԵԴՐՈՆԱԿԱՆ Դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէ եւ դրամատուներու համադաշնակցութեան նախագահ Ժոպէֆ Թարապէյ էր էլ Կեդրոնական Դրամատան մէջ կատարեցին մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին յայտարարեցին, թէ յառաջիկայ 9 եւ 10 Հոկտեմբերին վարչապետ Ռաֆիք Հարիրիի հովանաւորութեամբ տեղի պիտի ունենայ արաբական դրամատան խորհրդածողով մը: Սալամէ եւ Թարապէյ ընդգծեցին, որ դրամատան ինչպէս նաև քաղաքին քրոնթեան նոր տեսակետներն համաձայն, պարտադրուած է արաբական երկիրներուն դիրացնել դրամատանային գործընթացը:

AIR-KOOL
air-conditioning

Be COOL with AIR-KOOL

THE SUPER SILENT BRAND NEW HEAT-PUMP A/C WITH WARRANTY
Starting 250\$

Sole Agent:
G. Ayanian & Sons
Dora, (01)255222/3/4/5/6 - Gemmayzé, (01)447000-445396 - (03)627728/9
Fax: (01)265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanian.com

galerie
PIERROT
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans

galerie
PIERROT
Liste de Naissance et de Bâtieme
Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ԾԱԽՈՒ Ե ԅԱՐՍԱՐ ԳԻՆՈՎ

Յարկաբաժին մը Պիաքուի մէջ (Չալքայն վեր), մօտ 200 քառ. մետր, չորրորդ յարկ, 3 մնջասնեակ, 3 բաղնիք, մեծ հիւրանոց եւ ճաշասնեակ, լուացքի սենեակ, կահաւորուած խոհանոց, ինչպէս նաև մեծ պատշգամ գեղեցիկ տեսարանով եւ կառատուն: Հեռ. 03-203459:

**2003-2004 ՏԱՐԵՇՐՉԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԻ ՏԱՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉԸ՝ ԲՈՒՈՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ, ԱՔՍՈՐ ԳԱՍԱՐՃԵԱՆ, ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՑ, ՍՈՒՐԷՆ ԽԱՆԱՍԻՐԵԱՆ,
ՌՈՒԲԻՆԵԱՆ ԵՒ «ՅԱՌԱՉ» ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՉՆԵՐՈՒՆ 2003-2004 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ
ԿՐԹԱԹՈՇԱԿԸ ԱՆՎՃԱՐ**

ՀԱՋԱՐ ՏԱՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻԻ ՀԵՏ

8

ՇԷՆՔՍ ՇԻՆԵՑԻ ԱՐԱՅԻ ՎՐԱՅ

Ահա որ Նարեկացին կը սկսի թուել այն բարեմասնութիւնները, զորս Աստուած չնորհեց մարդուն.

Բարեգարդեցիք խօսելու ձիրքով, Շունչ ցերեպեղով՝ փայլ տուիր ինձի, Մտքով նոխացուցիք, զարգացուցիք խելքով ու իմաստութեամբ, Հանճարով օժտուած՝ զատորոշեցիք շնչաւորներէն, Մնունդ տուիր հօր պէս, հոգատար եղար դայեակի նման,

Եւ խնամեցիք որպէս ստեղծող: Զիս՝ ամբարիշտս Ոռոգեցիք բու կեանատու ջուրով, Աւագաններուդ ցօղով մաքրեցիք, Կերակրեցիք հացովդ երկնային, Թոյլ տուիր որ աչքերս երկրային Համարակօրէն նային դէպի քեզ, Քեզի մօտեցուցիք անմաքուր ձեռքիս մատները հողանիւր,

Մահացու մոխիրս յարգեցիք որպէս լոյսի ճառագայթ, Զայրեցիք բերանս, լեզուս նանուրութեամբ, Երբ ժառանգակից կոչեցի դիս քեզի: Զմբօղակեցիք լոյսը աչքերուս երբ որ հայեացքս յառած էի քու վրայ, Զխորտակեցիք դաստակը բազուկիս երբ ան անմաքուր՝ դէպի քեզ երկարած էր: Զկոտորեցիք մատներս երբ ես Կը շօշափէի պատգամդ կեանց: Նուիրման պահուն խաւար չպատեց Շուրջս, անաւոր: Զնայեցար ինձի բարկութեամբ խոտոր, Ինչպէս վարուեցար Իսրայէլի հետ, Երբ խոտորակի քեզի հետեւեցայ: Խայտառակ չըրիք հարստարանիդ մէջ Զիս՝ անարժանս քու պարբերութեան: Ոչ հագուստներս գծուծ տեսնելով Յանդիմանեցիք անօրինեալս, Ոչ ալ ձեռք ու ոտքս ամուր կապկպած՝ Դուրս վնասեցիք դէպի կուռ խաւար:

Ինչպէս կը տեսնուի վերի տողերուն մէջ, Աստուած միայն կարողութիւններ ու արժանիքներ չնորհելով չէ՛ որ պանծացուց ու մեծարեց մարդը, այլ նաեւ մարդուն նկատմամբ իր բարի կեցուածքով պատուեց մարդը, մեծարեց զայն: Այս երկրորդները շատ աւելի կարեւոր կը թուին Նարեկացիին: Աստուած կրնար երես դարձնել մեղքերու մէջ թաթխուած մարդէն, կրնար անդին հրել այն «անմաքուր» ձեռքը, զոր մարդը կ'երկարէ դէպի Աստուած: Աստուած ազնուօրէն արտօնեց, որ մարդու երկրաւոր, այսինքն մեղաւոր աչքերը նային իրեն: Աստուած անսահմանօրէն բարի եղաւ մարդու նկատմամբ: Ատոր փոխարէն մարդը ի՛նչ ըրաւ: Բոլոր այս բարիքներուն դիմաց ի՛նչ ըրաւ Նարեկացին, որ կը խորհրդանշէ ամբողջ մարդկութիւնը.

Այդ բոլորի տեղ, Աստուած իմ եւ տեր, Քեզ չարիքներով փոխհատուցեցի: Երախտիքներն ու բարիքները քու Անմիտ ընթացքով վատեցի ի սպառ: Բարձրեալիդ կողմէ հոգատարութեամբ Իմ վրայ յարգուած անճառ լուսաւոր շնորհները ողջ խելագարութեան մ'ըրիկով օդ, ցնդեցուցի: Թեպէտ, շատ անգամ հոգածու ձեռքդ կարկառելով ինձի

Ուզեցիք քաշել դէպի քեզ, սակայն ես չհասկցայ: Թեեւ խոստացայ քեզ հաճոյ ըլլալ, Սակայն այդ ուխտը նոյնպէս դրժեցի: Նոյն չարիքները նիւթեցի դարձեալ Վերադառնալով նախկին կեանքիս: Ինձի կը պատշաճին առակներն ամբողջ Աստուածարեալ սուրբ մարգարէներու, Քանզի դու ինձմէ յուսացիք խաղող, Փոխարեւը ես ընծիւղեցի փուշ:

Դեռ պիտի շարունակէ Նարեկացին, բայց պահ մը կանգ առնենք բանաստեղծին ահաւոր այս խոստովանութեան ու ինքնաքննադատութեան խորհուրդին վրայ: Հիանալի Նարեկացիի խոնարհութեան ու սրտաբացութեան վրայ, թէ ոչ զարմանալ անոր ստորակայական կամ ինքնամեղադրական կեցուածքին դիմաց: Հարցումին պատասխանելէ առաջ, եթէ կ'ուզէք, եկէք գնահատենք այստեղ գործածուած պատկերներուն ուժ-ժականութիւնը, մպնաւանդ վերջինը, ուր բանաստեղծը ինքզինքը մարգարէներու կողմէ սահմանուած բոլոր պատիժներուն արժանի կը նկատէ, քանի որ միայն փուշ կրցաւ տալ, մինչ իրմէ կը սպասուէր խաղող:

Յիմարի նման շէնքս շինեցի աւազի վրայ: Խաբուեցայ, կարծեցի որ լայն արահետով Կրնամ հասնիլ անձկալի կեանքին: Ինքս փակեցի ելքը նամբաներուս:

Նարեկացիին հազար տարի վերջ, այսօր ալ մեր կեանքին մէջ ընդհանրապէս կրնայ գալ պահ մը երբ կը կրկնենք սա առաջին տողը. «Յիմարի նման շէնքս շինեցի աւազի վրայ»: Բայց եկէք տակաւին հարց չտանք, թէ կրնա՞լի՞նք աւելի իմաստուն ըլլալ եւ մեր շէնքը կառուցել հաստատուն ժառի վրայ:

Ռ. ՀԱՍՏԷՃԵԱՆ

ԺԻՏՈՒՄ ԵՒ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԱ ՄՈՒՏՔԻ ՎԻՉԱ՞

Ժ ա մ ա ն ա ն ա կ ի ց թուրքիան եւ իր մտաւորականութիւնը կը հետեւին թրքական առածին, որ կ'ըսէ թէ ուրացումը կտրի ինչիս բերդն է: Ուրացման արշաւի յառաջապահն է թրքական Պատմութեան Միութիւնը, որ կը զարգացնէ ինքնատիպ տեսակէտներ, ըստ որոնց՝ Ա. Աշխարհամարտին զոհուած հայերու պարագան սոսկ ենթադրութիւն է, եւ իրականութիւնը այլ է:

Իսկ ի՞նչ է այդ իրականութիւնը. հայերը գաղթած են դէպի Միացեալ Նահանգներ, Արժանիքին, Աւստրիա, Ֆրանսա, այլուր: Այս ապատեղեկատուական եւ ապակողմնորոշող արշաւին մէջ չեն յիշատակուիր Հայաստան ապաստան գտած գաղթականները, միջինարեւելեան հայկական գաղութները, ջարդերէն ճողոպտածները, որոնք վրաններու տակ ապրեցան, հիւղաւաններ հիմնեցին, թրքական Պատմութեան Միութեան գիտաշխատողները այցելած են Լիբանան, Սուրիա, Իրաք, Յորդանան, տեսնելու համար հոն ապաստանած ատանացի, այնթապցի, մարաշի, քիլիսցի, գէջլուցի, ուրֆացի, խարբեղցի, տէօթ-եռլցի, սսեցի եւ միւս հայերը: Դեռ վերապորոգներ կան եւ կան յարողները, որոնք լսած են իրենց ծնողներուն տառապանքը, ողիսակաւնը:

Ճիշդ է, որ 1915էն առաջ Արեւստահայաստանի հարստահարութիւններու եւ հայածնաբնորոշ իրրեւ հետեւանք, հայեր պանդխտութեան գացած են Պոլիս, աշխատած են խաներու մէջ, հասած են Ամերիկա եւ եղած են բանուոր, որպէսզի օգնեն իրենց ընտանիքին: Ճիշդ է, որ 1915էն առաջ Արեւստահայաստանի հարստահարութիւններու եւ հայածնաբնորոշ իրրեւ հետեւանք, հայեր պանդխտութեան գացած են Պոլիս, աշխատած են խաներու մէջ, հասած են Ամերիկա եւ եղած են բանուոր, որպէսզի օգնեն իրենց ընտանիքին: Ճիշդ է, որ 1915էն առաջ Արեւստահայաստանի հարստահարութիւններու եւ հայածնաբնորոշ իրրեւ հետեւանք, հայեր պանդխտութեան գացած են Պոլիս, աշխատած են խաներու մէջ, հասած են Ամերիկա եւ եղած են բանուոր, որպէսզի օգնեն իրենց ընտանիքին:

Ո՞վ պիտի ըսէ թէ ինչու եւ ինչպէս այդքան կարճ ժամանակի ընթացքին հայաթափուեցան հայապատկան պատմական հողերը: Ի՞նչպէս պիտի յաջողին կեղծիքով եւ գեղծարարութեամբ մեղադրել Լորտ Պրայսը, Առնոլտ Թոյնային, ջրել բրիտանական կապոյտ կամ ճերմակ գիրքերը, Լեֆսիուսը, Ամերիկայի դեսպան Մորկընթաուը, Արմին Վեկնէլը:

Եթէ իրենք չեն ջարդած հայերը, եթէ անոնք ինքնակամ մեկնած են լքելով գոյք եւ կալուած, մեղադրանք հերքող թուրքերը եւ թուրքիան պէտք է որ յիշուած եւ ըստ իրենց գաղթած աւելի քան երկու միլիոն հայերուն ինչքերը վերադարձնեն. տուն, հող, այգի: Բայց ոչ մէկուն համար գաղտնիք է, որ ցեղասպանութիւն գործուեցաւ, հայերը տեղահանուեցան՝ անոնց հողին տիրանալու համար: Թուրքիա լրագրական եւ քաղաքական քարոզչութեան սահմանը անցած է եւ այժմ անտեղեակ մտաւորական շրջանակներու կ'ուզէ ներկայանալ գիտական շարքով ուսումնասիրութիւններով: Այս արշաւին մէջ կրնայ յաջողութիւն արձանագրել, քանի որ այս նպատակի իրականացման համար պետական վարկեր կը յատկացնէ: Թուրքիա մէջ յատկացնէ թուրքիա մէջ ընդհանուր հարկեր, որոնք ջարդուած կը համարուէին, գացած են օտար երկիրներ: Չենք կասկածել, որ թուրք պատմաբաններու կողքին պիտի գտնուին ամերիկացի եւ ֆրանսացի երեսուն արծաթի ծախուածներ, որոնք պիտի արձագանգեն նենդափոխութեան:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԳԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՅՆՃԱՐ - ԼԻՔԱՆԱՆ ԿԵՐԱՍՈՒՏ

Տերը կամ 2003 - 2004 տարեշրջանի արձանագրութիւնները տեղի պիտի ունենան հետեւեալ ձեւով.

- Չորեքշաբթի՝ 17 Սեպտեմբերին Ուրբաթ՝ 19 Սեպտեմբեր 2003, առաւօտեան ժամը 9:00էն 1:00 ցերեկօթիկ աշակերտներ:
- Երկուշաբթի՝ 22 եւ Երեքշաբթի՝ 23 Սեպտեմբեր 2003, առաւօտեան ժամը 9:00էն կէսօրէ ետք ժամը 3:00 գիշերօթիկ աշակերտներ:

ՎԵՐԱՍՈՒՏ Չորեքշաբթի՝ 24 Սեպտեմբեր, առաւօտեան ժամը 8:00ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՎԵՐԱՍՈՒՏ BACK TO SCHOOL

Դասագիրքեր Անգլերէն - Արաբերէն - Հայերէն - Ֆրանսերէն

Vosketar Bookstore
National Textbooks - All kinds of Schoolbooks & Dictionaries

Պուրճ Զամուտ, Ս. Փրկիչ Եկեղեցույ կից, Զեռ.: 01/264750
E-mail: vosketar@yahoo.com

ՕՐԻՆԱԿ ԱՌՆԵՆՔ

Գեշ բան չէ երբեմն ուրիշներէն օրինակ առնելը, մանաւանդ երբ դրական բան մըն է եղածը: Այսպէս, քանի մը շաբաթ առաջ ֆրանսական համապատասխան իշխանութիւնները որոշեցին e-mail անցելէն բառին տեղ գործածել ֆրանսերէն courriel բառը, որ կազմուած է courrier electronic բառերէն:

Հետաքրքրական է, չէ՞: Ֆրանսացիք կը մտածեն, որ եթէ կարելի է տուեալ բառին ֆրանսերէնը ունենալ, ինչու՞ չստեղծել ու չգործածել զայն:

Սրբնքաց զարգացող արհեստագիտութեան հետ, լեզուները եւս կը նոխանան նոր բառաւորներով: Օրինակ, տանամեակ մը առաջ, հայերէնի մէջ «կայքէջ», կամ «համացանց» բառերը չունեինք: Իսկ հարիւր տարի առաջ՝ հետախօս-հետաձայն-հետատեսիլ-ձայնասփիւռ բառերը եւս չունեինք:

Այսօր ունիւք, կը գործածենք թէ՛ «համացանց» եւ թէ՛ «կայքէջ», որոնք այլեւս հայերէնի մէջ քաղաքացիութիւն ստացած բառեր են: Ճիշդ է, տակաւին e-mail բառին հայերէն համարձակ եւ «քաղաքացիութեան» իրաւունք ստացած բառ մը: «Իմալ»ը (Electronic ԵԱՄԱԿ=ի-մակ), իբրեւ e-mailի հայերէն հոմանիշ, շատերու համար կրնայ անհասկոյթիւն բուրել, ուրիշներու համար՝ ոչ, այն պատճառաբանութեամբ, որ տրամաբանական կրեատում մըն է:

Մեզի, լրագրողներուս համար այս հարցը լուրջ բնոյթ ունի, որովհետեւ նախանձախնդիր ենք մեր լեզուի մաքրութեան պահպանումով: Այս պատճառով ալ հետամուտ ենք մեր բերքի էջերուն մէջ գործածելու «համացանց»ը, «կայքէջ»ը եւ տակաւին «ամալարկ»ը՝ փոխան «իմ-բընէթ»ի, «ուեպ սայթ»ի կամ «սայթ»ի, եւ կամ... «պիտեմէ»ի:

Շատերէ մեղադրանք լսած ենք մեր կարծեցեալ մաքրակրօնութեան հասցէին: Սակայն մեր մաքրակրօնութիւն չէ, այլ՝ տարրական յարգանք մեր լեզուի անաղարտ գործածութեան նկատմամբ եւ մանաւանդ՝ բառաւորների նոխանցման նկատմամբ:

Հայաստանի մէջ գործող Լեզուի Պետական վարչութիւնը այս ուղղութեամբ բաւական ճամբայ ունի կտրելիք, որպէսզի այլեւս պոչը կտրուի «միջիստր»ներուն, «հնոսպիտալ»ներուն, «բալան»ներուն եւ, (ի՛նչ անհոգիութիւն), «կրթօջախ»ներուն, եւ որպէսզի կրնուի գարգացայ ոչ թէ «նորմալ տեմպերով», այլ՝ բնական կշռոյթով: Ֆրանսան՝ օրինակ:

ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ

Կ՝ՈՒԶՈՒԻ Կ՝ՈՒԶՈՒԻ

●Վարպետ ոսկերիչ մը (ստեղծեր). հեռ. 01-338821:

●Ատամնաբուծի մը համար օգնական - քարտուղարուի մը: Դիմել՝ հեռ. 01-261543 եւ 03-609899:

ԾԱԽՈՒ ԸՈՂԱՇԵՐՏ

●Այն մարդու շապիկ 4000 քառ. մետր տարածութեամբ, ջիւղով, կոյուղով եւ թրիֆազէ Եկեղեցուկանութեամբ: Դիմել՝ հեռ. 03 - 207772:

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

•Over Bed Table
•All Kinds Of Oxygen
We Also Provide
•Laboratory service.
•Physiotherapist
•Nurses Aids
•P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵՆԷ, Բ. ՅԱԿ ԵՆԻ (01) 242553/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

7րդ Արուեստ



ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ «ՎՈՏՔԱ ԼԵՄՈՆ» ԺԱՊԱԲԷՆԸ՝ ԿՈՎԿԱՍԷՆ ԵԿԱԾ ՓՈՔՐԻԿ ԳՈՏԱՐ ՄԸ

Հայաստան-քրտական-ֆրանսական միացյալ արտադրություն եղող «Վոտքա Լեմոն» ժապավենը Վենետիկի Շարժապատկերի 60րդ փառատոնին արժանացավ «Սան Մարքո» լուսագոյն ժապավենի մրցանակին: Միջազգային լրատուամիջոցներ դրական անդրադարձ ունեցան շատ համեստ պիտուճեղ իրականացումը այս ժապավենի վրայ, որում նկարահանված կատարում է Հայաստանի մեջ, եւ որում դերասանական կազմին մեջ կան մեծ թիով հայ դերասաններ (Լալա Սարգսյան, Ռոմեն Արմենյան, Արմեն Սարգսյան, Ասրիկ Ալազանյան): Մինչ «Տը Կարտիզ» գայն որակեց «Վովկասն Եկած փոքրիկ գոհար» մը եւ «Հայ-քրտական լուսագոյն ժապավենը, զոր երբեք կարելի է տեսնել», ստորեւ կը ներկայացնենք «Ինթերնեշնոնլ Շերլոկ Թրիպիոն» օրաթերթին եւ էլեկտրոնային «Աքրիտեյլի» օրաթերթին մեջ լոյս տեսած յօդուածները հատուածներ:



Բեմադրիչ Հինըր Սալեմ

Չորս տարի առաջ Հայաստանի մէջ նկարահանելու ընթացքին Ֆրանսա ապաստանած իրաքցի քերտ բեմադրիչ Հինըր Սալեմ յայտնաբերեց, թէ «Ներքե Երկրի» հարց չկայ, կը նշանակէ, թէ շատ հարցեր պիտի ըլլան: Երբ ըստի «միայն վայրկեան մը», կը նշանակէ երկու կամ երեք օր, իսկ երբ ըստի «վաղը» ապա կը նշանակէ «ընաւ»: Ան աւելցուց. «Նկարահանման առաջին օրէն ետք ես ինծի խոտազգայ գործի պատճառներով ընաւ հոս չվերադառնալ: Սալեմ փոխեց իր միտքը այս տարի վերադառնալով՝ պատրաստելու համար «Վոտքա Լեմոն» ժապավենը, վենետիկի Շարժապատկերի փառատոնին «Ափսթրիմ» բաժանմունքին ծիրաններու ցուցադրման վերջին ժապավեններէն մէկը, որ շահեցաւ նոր տաղանդներու յատկաց-

ած «Սան Մարքո» լուսագոյն ժապավենի մրցանակը: «Վոտքա Լեմոն», որուն թատերաբեմը Հայաստանի ձեռնածածկ լեռներուն մէջ քրտական գիւղ մըն է, կը ներկայացնէ Համոյի՝ հանգստեան կոչուած եւ այրիացած կարմիր բանակի գինուորին, անոր անպիտան տղուն եւ ռուսի մը հետ ամուսնացող գեղեցիկ թուրքուհիին դժբախտութիւնները: Խորհրդային Միութեան փլուզումը գիւղին մէջ ըտլորը ձգած է գրեթէ նոյն աղքատութեան մէջ: Եւ ինչպէս Համո կ'ըսէ «Առաջ ունէինք ամէն բան, բնացի կատուութեան: Հիմա աղատութիւն ունինք եւ ուրիշ ոչինչ»: Իր եօթը տղարի արժողութեամբ թողնալով անկարող պահելու ինք հինքը եւ իրմէ կախալ պարագաները՝ ան կը սկսի վաճառել մնացած թանկարժէք իրերը:

Իր կնոջ գերեզմանին տրուած կանոնադր այցելութիւններուն ընթացքին Համո կը ծանօթանայ գրաւիչ հայալիքի մը՝ Նիքոլային: Ան նոյնպէս կը գտնուի դրամական յուսահատ վիճակի մէջ՝ փորձելով օրապահիկը շահիլ ծախելով ժապավենին խորագիրին «Վոտքա Լեմոն»ը: Աստիճանաբար Համոյի եւ Նիքոլայի միջեւ կը սկսի զարգանալ վիպա-

յին սէր մը: Սալեմ ժապավենին դերասանական կազմին մէջ ընդգրկած է տեղացիներ, որոնց հմայքը, արժանապատուութիւնը եւ գրկանքին դիմաց ցցուող իրենց առածգրկանութիւնը տպաւորիչ են՝ առանց նշելու անոնց անընազօսիկ դերասանական ձիրքերը: Պատու մը յաճախ գուարճալի է, առանց նսեմացնելու դառն իրականութիւնները եւ փայլուն կերպով կը բռնէ այն գերիբազան բնականութիւնը, որոնք ծանօթ են աշխարհի այս կողմը ճամբորդողներուն: Եւ հակառակ այս մարդոց դիմադրուած հարցերուն՝ ժապավենին վերջնական մթնոլորտը անպասելիօրէն խրախուսիչ եւ լաւատեսութեամբ կը ներշնչէ: Ինչպէս Սալեմ արտայայտուած է. «Բոլոր հայերը անպարտներ կը նկատեմ, քանի որ չեմ հասկնար, թէ անոնք ինչպէս կը յաղթին գոյատեւելու: Կարծեմ իրենք եւս չեն հասկնար»:

«Ինթերնեշնոնլ Շերլոկ Թրիպիոն»

Յետ համայնավար աշխարհի դառն - քաղցր իրականութիւնները կը սպառնան տեղեւոր փոքրիկ ժապավեններու սեռ մը: «Վոտքա Լեմոն»ի մէջ փոշոտ եւ աղքատիկ քրտական գիւղ մը կը սկսի մտածել, թէ կեանքը իսկապէս այդքան վատ էր խորհրդային ժամանակաշրջանին: Յոգնած հեզաններով եւ մարդկային բնութեան մեղմ նկատումներով հարուստ «Վոտքա Լեմոն» չունի սա-



«Վոտքա Լեմոն» ժապավեն

կայն ամբոխին հաճելի թուող յատկանիշներ: Աքի Քորիսմաքի եւ Էմիր Քուսթուրիճայի գործերը յիշեցնող այս ժապավենը ունի տիւր իրականութիւնը հեթաթախյին պատուի փոխակերպելու կարողութիւնը: «Վոտքա Լեմոն» չորրորդ ժապավենն է քսոթրեալ քերտ բեմադրիչ Հինըր Սալեմի, որ վերջին տասը տարին կը բնակի Փարիզ: Ամէնէն զժուարիին ժամանակներուն մէջ գոյատեւումի պատմութիւն մը, ժապավենը կը ժպտի աշխարհին անհեթեթութեան վրայ եւ կը բարեւէ այն չընկրկող իրապապաշտները, որոնք ինչորի համատարած անյուսութեան մէջ կը պահանջեն իրենց լաւատեսութիւնը: Թէեւ Համոյի եւ Նիքոլայի յարաբերութիւնը հմայիչ ձեւով կը պատմուի,

ՎԵՐԱՍՈՒՏ

Ս. ԽԱՆՍԻՐԵԱՆ ԱԶԳԱԿԻՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ (Ֆանար, հեռ. 891545)

- 2003-2004 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին մինչեւ 26 Սեպտեմբեր 2003, ամէն օր բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, ժամ 8:30Ը 12:30:
- Վերաքննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ ժամանակացոյցով. Երկուշաբթի, 22 Սեպտեմբեր 2003 Թիւրքաշաբթի, 23 Սեպտեմբեր 2003 Արաբերէն Գործըշաբթի, 24 Սեպտեմբեր 2003 Անգլ. եւ Հայ լեզու Դիւզաբթի, 25 Սեպտեմբեր 2003 Գիտ. եւ Բյուր. Պոստ. Վերաքննութիւնները տեղի կ'ունենան առաւօտեան ժամը 9:00Ին:
- Օրընարի սպասարկութիւնը ապահովուած է բոլոր շրջաններուն համար:
- Յաւելեալ մանրամասնութեանց համար դիմել տնօրէնութեան:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԺԱՊԱԲԷՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- ՏԸ ՊՈՒԼԵԹՐՈՒՅ ՍԱՆԸ» (Փլանք/Ընդերտ, Ապրաժ, Թրիպիոն, Ֆրիուլ)
- ԼԻՎԵԼԻ ՊԼԱՆՍ 2» (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սեք Էլի, Սոտեք, Կալաքսի, Սթարկէյթ)
- ՕԼՏ ՍԵՆԻԼ» (Ամփիր/Տիւն, Սոտեք, Ֆրիուլ, Մթալլու 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի)
- ՏԵՏ ՊՈՅՁ 2» (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սեք Էլի, Սոֆիլ, Սոտեք, Ֆրիուլ, Մթալլու 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի, Սթարկէյթ)
- ԵՆԵԿՈՐՈՒ ԶԵԸ» (Ամփիր/Լաւ Սալիմաս)
- ԹԻՐՁ ԱՅ ՏԸ ՍԱՆ» (Ամփիր/Տիւն, Եսփաս, Սեք Էլի, Սոտեք, Մթալլու 2001, Լաւ Սալիմաս, Կալաքսի, Ֆրիուլ, Սթարկէյթ)
- ՆՈՒԿՈՒՏ ՆՈՒՍՈՒՅՏ» (Ամփիր, Եսփաս, Սոֆիլ, Մթալլու 2001, Կալաքսի)
- ՏԸ ԻՆԼՈՒԶ» (Ամփիր, Սոտեք, Ֆրիուլ)
- ՍՓԻՐԻԹԸՐՁ ԸՈՒԷՅ» (Փլանք/Չուք, Ապրաժ, Ընդերտ)
- ՏԸ ԼԱՅՖ ԱՅ ՏԵՅՎԻՏ ԿԵՅԼ» (Փլանք/Ընդերտ, Չուք, Ապրաժ)
- ԹՍՄ ՈՒՅՏԸՐ, ՏԸ ԸՐԵՅՏԸ ԱՅ ԼԱՅՖ» (Ամփիր, Սոտեք, Ֆրիուլ, Մթալլու 2001, Կալաքսի)
- ԸՆԹԵՅՏԸՆԸ ԱՅ Ե ՏԵՅՆԸՐՍ ՍԱՅՆՏ» (Փլանք/Չուք, Ընդերտ, Ապրաժ, Թրիպիոն)
- ՏԵՏԻ ՏԵՅ ԸԷՅՐ» (Ամփիր, Եսփաս, Մթալլու 2001)
- ՏԵՏԹԵՅՏԸՆԸ» (Փլանք/Չուք, Ապրաժ)
- ՎԻՈՒ ՖՐԱՍ ՏԸ ԹՈՓ» (Փլանք/Չուք, Ապրաժ, Ընդերտ)
- ՓԱՅՐԸՅ ԱՅ ՏԸ ԸԷՐԻՊԵՆԸ» (Փլանք/Ապրաժ, Ընդերտ, Թրիպիոն)
- ՊՐՈՒՍ ՕԼՍԱՅԹ» (Փլանք/Ապրաժ, Ընդերտ, Չուք)

●●●●● Գերազանց ●●●●Շատ լաւ ●●●Լաւ ●●Սիրելի ●●Չենք յանձնարարել □Չենք դիտած

ԸԱՐԺԱՊԱՍԿԵՐԻ ՍՐԱՆՆԵՐՈՒՆ ԼԵՆԱԶԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ

Եսփաս - 09/212516 - Սոտեք - 01/616707 - Տիւն - 01/792123 - Սոֆիլ - 01/328806 - Քոնքորտ - 01/738439 - Ամսալաւ - 09/226010 - Ֆրիուլ - 01/485590 - Ապրաժ - 01/292192 - Քալաքսի - 09/912503 - Չուք - 09/221363 - Սթարկէյթ - 08/813901 - Սեք Էլի - 04/406706, Թրիպիոն - 06/442471:

Մասնագիտութիւնը ՈՍԿԷ ԱՊԱՐԱՆՋԱԴ Ե ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷԾ

դիմացը կը բանայ

Ա.- Համակարգիչի ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ԵՆ ԼՈՐՈՂՈՒԹԵԱՆ մասնագիտութիւնը, ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ:

Բ.- Ոսկերչութեան ու կաղապարաշինութեան վարպետ ըլլալու համար, տարիներ եւ շատ ճիգ է պէտք:

ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷԾ ամենակարգ ճամբան է այդ նպատակին հասնելու, առաւել՝ վկայեալ վարպետ ըլլալու համար: Արձանագրութիւն՝ ամէն օր

ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷԾ. Տորա՝ հեռ. 01/251320

ՀԱՅ - ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՆՈՐ ԺԱՊԱԲԷՆ՝ «ԱՐԱՀԵՏ»

Երեւանի մէջ յառաջիկայ գարնան պիտի աւարտին գեղարուեստական երկար «Արահետ» ժապավենին նկարահանման աշխատանքները: Այս առիթով տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին ժապավենին բեմադրիչ Ռուբեն Քոչար յայտնած է, թէ ժապավենը միացեալ արտադրութիւնն է շարժապատկերի «Արմէնֆիլմ» եւ «Նիու Լայն Ինթերթէյնմընթ» ընկերութիւններուն: Հայաստանեան եւ ամերիկեան գործակցութեան արդիւնք եղող այս ժապավենին մէջ, իսկ մասը նկարահանուած է Հայաստանի մէջ, իսկ անոր մնացած գլխաւոր մասին նկարահանումը պիտի աւարտի Լոս Անջելէսի մէջ:

Թէեւ Ռուբեն Քոչար մանրամասնութիւններ չէ փոխանցած «Արահետ»ի նիւթին մասին, սակայն յստակացուցած է, թէ ժապավենը պիտի արժարձէ հայրենիքէն հեռանալու եւ օտար երկիրներու մէջ ապրելու քեման եւ պիտի փոխանցէ հայրենիքը չլքելու պատգամը:

Կը ծրագրուի ժապավենին պատրաստութեան աշխատանքներուն ամբողջացումէն ետք երեւանի մէջ անոր ցուցադրութեանց անաչ «Արահետ»ը ներկայացնել Քոչարի, Վենետիկի, Պերլինի եւ Թրիպիոնի միջազգային փառատոններուն: Ժապավենին մէջ դեր ստանձնած են հայաստանցի եւ ամերիկացի դերասաններ, իսկ գլխաւոր դերով հանդէս կու գայ հայրենի նշանաւոր դերասան Յարութիւն Մովսիսեան:

Բեմադրիչ Ռուբեն Քոչար նախապէս բեմադրած է կարեւոր թիւով ժապավեններ, որոնք արժանացած են միջազգային մրցանակներու («Քոնքորտ», «Աւետիք», «Լիլիթ»):

«Արահետ»ը երկրորդ գործակցութիւնն է «Արմէնֆիլմ»ի եւ «Նիու Լայն Ինթերթէյնմընթ»ի միջեւ: Առաջին ժապավենը՝ «Հերոսքրատես» (2001), մրցանակներու տիրացաւ լատին ամերիկեան շարժապատկերի փառատոններու ընթացքին:

ԱՐՅԱՆԵԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԺԱՊԱԲԷՆ՝ «ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԱՆԱԽԱՐՏ ՕՐԱԳԻՐ»

Հայրենի բեմադրիչ Յովհաննէս Յովհաննիսեանի կողմէ բեմադրուած եւ արցախեան ազատամարտին նուիրուած «Ղարաբաղեան անաւարտ օրագիր» ժապավենը կը հանդիսանայ մեր իրականութեան մէջ այս թեմայով առաջին եւ միակ ժապավենը, որուն նկարահանման կարեւոր մէկ մասը կը կրէ վաւերագրական բնոյթ եւ արձանագրուած է պայքարի տաք օրերուն: 1995 թուականին պատրաստուած թիւերը աւարտած եւ սակայն սակաւթիւ օրինակով հրատարակուած այս ժապավենը պիտի տեսնենք միայն «Ազատ Արցախ» օրաթերթին հետ ունեցած գործընթացի մը ընթացքին Յովհաննէս Յովհաննիսեան, որ ազատագրական պայքարի տարիներուն Արցախ գտնուած է Ղարաբաղի ժամանակակից պետական վարչութեան աշխատանքներուն ծիրէն ներս, հետաքրքրական տեղեկութիւններ փոխանցած է ժապավենին պատրաստութեան մասին:

Արցախեան ազատամարտի մասին ժապավենը բեմադրելու գաղափարը ծնունդ առած է պայքարի տարիներուն՝ պատերազմի զաշտին վրայ: Ժապավենին պատրաստութեան ընթացքին զոհուած է աշխատատեղիին անդամներէն մէկը, ում կողմէն պատճառով փճացած են նկարահանուած նիւթերը եւ գործիքները: Բեմադրիչին իսկ արժեւորմամբ, «Ղարաբաղեան անաւարտ օրագիր» ժապավենը ունի ուսուցողական մեծ արժէք: Նշենք, որ 80 վայրկեան տեւողութեամբ այս գործին մէջ իրական դէմքերու կողքին դեր ստանձնած են հայաստանցի դերասաններ:

Յուզողութեամբ համար հայաստանեան շարժապատկերի սրահներուն մէջ՝ ժապավենը կարիք ունի պետական հովանաւորութեան:

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ

(Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

Համազգային Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի 2003-2004 տարեշրջանի հին թէ նոր ուսանողներու արձանագրութիւնները կը շարունակուին առաւօտեան ժամը 10:00Ը 1:00, Երկուշաբթի Սեպտեմբեր եւ Հայկ Արաւանեան ձեւարանի մեր գրասենյակներէն մերս:

Շտաբըրուողները կրնան անձամբ դիմել գրասենյակ, եւ կամ կապուիլ

Շեանայ՝ 04-712603
04-712604
03-429685

Fax: 04-712601
E-mail: djemaran@inco.com.lb
Մուտքի ընդունութիւնները՝ 1-3 Տոկտեմբեր 2003Ին: Վերանուս՝ 6 Տոկտեմբեր 2003Ին:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Նորաստիճակի Նորաստիճակ

ԱՐՈՒԵՍԵԸ ԿԸ ՀԱԿԱՍԷ ԿՐՕՆԻՆ

«ՏԸ ՆԻԻ ԵՈՐԸ ԹԱՅԱՁ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ ՅՕՂՈՒԱԳԻՐ ՄԸ ԸԱՐՑ ԿՈՒ ՏԱՅ, ԹԵ ՈՐՈ՞՞ ԻՐԱՌՈՒՆՔՆԵՐԸ ԱՌԱՋՆԱԿԵՐԹ ԵՆ: ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԵՋ ԸԱՅՈՒ ՄԸ ԿՈՐՄԵ ԿԱՋԱԿԵՐՄՈՒԱԾ ԶՈՒՑԱԿԱՆԴԵՍ ՄԸ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԱԾ Է: ՈՒՒՍ ՈՒՂԱՎԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՆԱԿՐԱԿԱԾ Է ԽՍՍԵԻ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ ՍԱԿԱՆՆԵՐԸ, ՄԻՆՉ ՅԱՅՆԱԿՄԵՍ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉԳՏԻ ԹՕԹԱՓԵԼ ԽՈՐՐՐԱԳՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՆԵՐՈՒ «ԱՆԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ» ՊԻՏԱԿԸ



Նախագահ Փուլինը կը գորակցի ռուսական եկեղեցիին հոգեւոր ղեկավարութեամբ:

Րուս դէմ ճանաչած են երկու խաւեր, որոնք միասին տառապած են խորհրդային գաղափարաբանութեան եւ անաստուածութեան 7 տասնամեակներուն ընթացքին: Խորհրդային Միութեան քայքայումին յաջորդած 12 տարիներուն արւեստագէտներ եւ կրօնական հաւատացեալներ ծաղկում մը ապրած են նոր ժամանակներու Ռուսիոյ մէջ: Սակայն այս պարագային իւրաքանչիւրը իր իրաւունքները պաշտպանելով կ'ամբաստանէ միւսը՝ Ռուսիոյ մէջ տրոյղ ազատութիւնը շահագործած ըլլալու յանցանքով:

«Ազատութիւնը բացառ յայտնի դարպասներ, որ աղտոտութեան թանձր շոգիով սկսաւ ողողուիլ մեր շրջապատը, - կ'ըսէ ռուս ուղղափառ եկեղեցիին ամենէն պահպանողական անդամներէն հայր Ալեքսանտր Շարկունովը: Եկեղեցին մաքուր ջուրի շատ փոքր առուակ մըն է»: Յուցահանդէսին գործերը փճացուցած անձերը կը պատկանէին Մոսկուայի մէջ հայր Ալեքսանտրի գլխավորած Ս. Նիքոլայ եկեղեցիին: Ոմանք նոյնիսկ եկեղեցիին կը ծառայէին: Հայր Ալեքսանտր քարոզչութիւնը ձեռնարկեց անոնց պաշտպանութեան համար եւ թանգարանին դէմ: Ան ցուցահանդէսը համեմատեց բռնաբարութեան եւ պահպանողական արարքի հետ: «Հաւատացեալի մը համար այս սրբապղծութիւնը համար է եկեղեցի մը կործանելու, ինչ որ Ռուսիոյ մէջ մօտիկ անցեալին պատահեցաւ», կ'ըսէ ան:

Սախարովի աւանդին նուիրուած թանգարանը յաճախ դիտումնաւոր կերպով կը կազմակերպէ:

Սախարովի աւանդին նուիրուած թանգարանը յաճախ դիտումնաւոր կերպով կը կազմակերպէ: Սախարովի աւանդին նուիրուած թանգարանը յաճախ դիտումնաւոր կերպով կը կազմակերպէ: Սախարովի աւանդին նուիրուած թանգարանը յաճախ դիտումնաւոր կերպով կը կազմակերպէ:

պէ բանավէճեր հրահրող ցուցահանդէսներ, իրրեւ նիւթ ունենալով օրինակ՝ խորհրդային ժառանգութիւնը, մարդկային իրաւունքները եւ Ձեռնիտոյ պատերազմը: Ցարդ անոնցմէ ոչ մէկը նման ընդվզում յառաջացուցած է:

Յուցահանդէսին բոլոր գործերուն նիւթը կրօնն էր, սակայն Մամոտուրովի համաձայն, անիկա այնքան հակակրօնական չէր, որքան՝ հակակղերական: Արուեստագէտներէն ոմանք ուղղափառ հաւատացեալներ էին, եւ ցուցահանդէսին նպատակը վերաւորել չէր:

Այսուհանդերձ Ալինա Կիրեւիչի քանդակը, որ գալորթ պատճառած էր, կը պատկերէր վտառային շինքի շինուած եկեղեցի մը: Անիկա կ'ակնարկէր 1990ական տարիներուն վաւերացուած օրէնքի մը, որուն համաձայն, եկեղեցին ոգելից ըմպելի կրնար վաճառել առանց պետական տուրք վճարելու:

Մագուժով ռուս ամերիկացի արուեստագէտ Ալեքսանտր Քոտլափով, որ նախապէս իր գործերուն մէջ ձաղկած է խորհրդային եւ ռուսական պետական խորհրդանիշները, ցուցադրած էր որմազը մը, որ Յիսուսը կը պատկերէր Քոթաքոլայի ծանուցումի մը վրայ: «Ասիկա իմ արիւնս է», գրուած էր որմազին վրայ՝ անգլերէնով:

Այլ գործ մը՝ Ալիսա Զրափեւսբայի մէկ հսկայ սրբանկարը կը կրէր երկրորդ պատուիրանն ներշնչուած վերնագիր մը. «Կուռքեր պէտք չէ փորագրես դուռն քու վրադ»: Սրբանկարին գլուխին տեղ ծակ մը բացուած էր, որպէսզի անկողիւր անոր ետեւ անցնելով դուռը դիտէր: Այլ ծակի մը մէջէն ան իր ձեռքով կրնար բռնել Աստուածաշունչ մը: Դիմակահանդէսի որմազին նմանող այս սրբապատկերին վրայ գրուած էր՝ «Իժեբը»:

Յուցադրուած գործերը այժմ կը գտնուին տեղույն դատախազին գրասենեակին մէջ եւ արուեստագէտներուն մեծամասնութիւնը կանչուած է հարցաքննութեան: Յուցահանդէսը կազմակերպողը՝ Յարութիւն Զուլուժեան անունով հայ մը, անհետացած է:

Թանգարանին իրաւաբանները ստացած են տեղեկագիր մը, որ կ'ըսէ, թէ կազմուած է մասնագէտներէ բաղկացած յանձնախումբ մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ որոշել:

